ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հունվարի 2025 թվականի № 26-Ա

ԻՐԻՆԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2024 թվականի դեկտեմբերի 30-ի № 536-Ա որոշումն և *Իրինա Ղազարյանի*՝ 2025 թվականի հունվարի 27-ի № 05 դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Իրինա Ղազարյանին*** տրամադրել 2025 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից տասն աշխատանքային օր՝ 2025 թվականի փետրվարի 6-ից 19-ը ներառյալ:

2. ***Իրինա Ղազարյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության հաշվապահ ***Նունուֆար Համբարձումյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ ***Նունուֆար Համբարձումյանին*** և «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Ռուզաննա Ավալյանին*** ապահովել «Գեղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Արամուսի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Ռուզաննա Ավալյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2025 թվականի հունվարի 29
ք. Հրազդան